

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2009 թվականի N 1308-Ն

ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՊՐԱՆՔԻ ՑԱՆԿԸ, ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՊՐԱՆՔԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՊՐԱՆՔԻ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱՂՐՄԱՆ, ԱՅՐ ԱՐՏԱՊՐԱՆՔԻ ԱՌԵՎՏՐԻ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ, 12.1-ին հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել՝

- 1) ռազմական նշանակության արտադրանք համարվող ապրանքների, ծառայությունների, աշխատանքների և մտավոր գործունեության արդյունքների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.
- 2) ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման և արտահանման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.
- 3) ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության լիցենզավորման կարգը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) ռազմական նշանակության արտադրանքի վերջնական օգտագործողի հավաստագրի օրինակելի ձևը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման և դրա առևտրի միջնորդական գործունեության լիցենզիա ստանալու հայտի ձևը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման և արտահանման շրջանակներում ապրանքների մատակարարման, ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման, ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության, ինչպես նաև ներմուծված ռազմական նշանակության արտադրանքի վերջնական օգտագործման հաշվետվությունների ձևերը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) ռազմական նշանակության արտադրանքի (ներմուծում, արտահանում), (տարանցիկ փոխադրում), (առևտրի միջնորդական գործունեություն) լիցենզիայի ձևը՝ համաձայն N 8 հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված ցանկի «ԱՏԳ ԱԱ ծածկագիր» սյունակում նշված ծածկագրերի մասով սույն որոշման դրույթները տարածվում են միայն այն ապրանքների վրա, որոնք նկարագրված են ցանկի «Ռազմական նշանակության արտադրանքի անվանումը» և «Ռազմական նշանակության արտադրանքի նկարագիրը» սյունակներում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

S. Մարգարյան

2009 թ. նոյեմբերի 25
Երևան

Ց Ա Ն Կ

ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
 ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄՏԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Հ/Հ	ԱՏԳԱԱ ԾԱԾԿԱԳԻՐ	ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ
ՌՆ 1.	9301 930200000 930320 930390000 901310000 930591000	<p>Հարթափող գենքեր, որոնց տրամաչափը չի գերազանցում 20 մմ, այլ հրացաններ և ավտոմատ գենքեր 12.7 մմ տրամաչափով (տրամաչափը ` 0.50 դյույմ) կամ ավելի պակաս և հավելյալ հարմարանքներ, ինչպես նշված է ստորև, և ներառյալ հատուկ նախագծված բաղադրամասերը.</p> <p>ա. ինքնաձիգեր, կարաբիններ, ռեկոլվերներ, ատրճանակներ, ավտոմատ ատրճանակներ և գնդացիներ,</p> <p>բ. Հարթափող գենքեր, ինչպես նշված է ստորև.</p> <p>1. Հարթափող գենքեր, որոնք հատուկ նախագծված են ռազմական օգտագործման համար,</p> <p>2. Այլ հարթափող գենքեր, ինչպես նշված է ստորև.</p> <p>ա. լրիվ ավտոմատ տեսակի գենքեր,</p> <p>բ. կիսավտոմատ կամ պոմպային մոդուլով աշխատող գենքեր,</p> <p>գ. Առանց պարկուճի զինամթերք օգտագործող գենքեր,</p> <p>դ. Խլացուցիչներ, հրացանին ամրացվող հատուկ մասեր, փամփուշտների պահուսնակներ, գենքերի օպտիկական մասեր և գենքերի համար ցուլի մեղմիչներ, որոնք հատկանշված են ՌՆ 1. ա., ՌՆ 1. Բ. կամ ՌՆ 1. Կ կետերում:</p>	<p><u>Նկարագիր</u> ՌՆ 1.ա. կետը չի վերաբերում հետևյալին. <i>ա. մուշկետներ, հրացաններ և կարաբիններ, որոնք արտադրվել են մինչև 1938 թ.,</i> <i>բ. մուշկետների, հրացանների կամ կարաբինների վերարտադրություններ, որոնք բնօրինակները արտադրված են եղել մինչև 1890թ.,</i> <i>գ. ռեկոլվերներ, ատրճանակներ և գնդացիներ, որոնք արտադրված են եղել մինչև 1890թ. և դրանց վերարտադրությունները:</i></p> <p><u>Նկարագիր 1 ՌՆ 1.</u> կետը չի վերաբերում այն հարթափող գենքերին, որոնք օգտագործվում են որսորդական կամ մարզական նպատակներով: Այս գենքերը պետք է հատկորոշարար ռազմական օգտագործման նպատակներով նախագծված չլինեն կամ չլինեն լրիվ ավտոմատ հրաձգման տեսակի:</p> <p><u>Նկարագիր 2 ՌՆ 1.</u> կետը չի վերաբերում այն հրաձգային գենքերին, որոնք հատուկ նախագծված են ուսումնական զինամթերք օգտագործելու համար, և որոնք չեն կարող այնպիսի զինամթերք հրաձգել, որոնք հատկանշված են ՌՆ 3 կետում:</p> <p><u>Նկարագիր 3 ՌՆ 1.</u> կետը չի վերաբերում այն գենքերին, որոնք օգտագործում են ոչ կենտրոնից հարված ստացող փամփուշտներով զինամթերք և ոչ լրիվ ավտոմատ տեսակի հրաձգող գենքերին:</p> <p><u>Նկարագիր 4 ՌՆ 1. Գ.</u> կետը չի վերաբերում գենքերի այն օպտիկական հարմարանքներին, որոնք չունեն պատկերի մշակման էլեկտրոնային կարողություն, մեծացնում են 4 անգամ կամ ավելի քիչ, եթե միայն դրանք հատուկ նախագծված կամ փոփոխված չեն ռազմական օգտագործման համար.</p>
ՌՆ 2.	9301 930120000 930190000 9305 9306 901310000	<p>Հարթափող գենքեր, որոնց տրամաչափը չի գերազանցում 20 մմ, այլ հրացաններ և ավտոմատ գենքեր 12.7 մմ տրամաչափով (տրամաչափը ` 0.50 դյույմ), հեռանետող գենքեր և հավելյալ հարմարանքներ, ինչպես նշված է ստորև, և դրանց հատուկ նախագծված բաղադրամասերը.</p> <p>ա. թնդանոթներ, գառաբիցաներ, հրանոթներ, ակնանետներ, հակատանկային գենքեր, հրթիռանետներ, ռազմական հրացույցներ, ինքնաձիգեր, հետհարված չառաջացնող հրացաններ, հարթափող գենքեր և գենքի հատկանիշները մեղմացնող հարմարանքները ներառյալ,</p> <p>բ. Ռազմական ծուխ, գազ և պիրոտեխնիկա հեռանետող գենքերը կամ գեներատորները, Նկարագրի ՌՆ 2. Բ. կետը չի վերաբերում ազդանշանային ատրճանակներին:</p> <p>գ. Զենքերի օպտիկական հարմարանքներ.</p>	<p><u>Նկարագիր 1 ՌՆ 2</u> <i>ա. կետը ներառում է ինժեկտորներ, չափիչ սարքեր, պահոցային տարաներ կամ ռեզերվուարներ և այլ բաղադրամասեր, որոնք հատուկ նախագծված են հեղուկ հրաձգային լիցքերի հետ օգտագործվելու համար` նախատեսված ՌՆ 2 .ա կետում հատկանշված ցանկացած սարքավորման համար:</i></p> <p><u>Նկարագիր 2 ՌՆ 2</u> <i>ա. կետը չի վերաբերում ստորև հատկանշված գենքերին.</i> <i>1. մուշկետներ, հրացաններ և կարաբիններ, որոնք արտադրված են մինչև 1938թ., 2. մուշկետների, հրացանների և կարաբինների վերարտադրություններ, որոնք օրիգինալներն արտադրված են եղել մինչև 1890թ.:</i></p> <p><u>Նկարագիր 3 ՌՆ 2.</u> <i>ա. կետը չի վերաբերում ձեռքով աշխատեցվող հրթիռանետերին, որոնք հատուկ նախագծված են սահմանափակ թռիչք ունեցող հրթիռների համար, որոնք չունեն բարձր պայթուցիկության լիցք կամ հաղորդակցման կապ, և կարող են թռչել ոչ ավելի,</i></p>

<p>ՌՆ 3. 930529000 9306</p>	<p>Զինամթերք և պայթուցիչ տեղադրող սարքեր, ինչպես նշված է ստորև, և հատուկ դրանց համար նախագծված բաղադրամասեր. a. Զինամթերք այն զենքերի համար, որոնք հատկանշված են ՌՆ 1., ՌՆ 2. կամ ՌՆ 12 կետերում, b. Պայթուցիչ տեղադրող սարքերի համար հատուկ նախագծված զինամթերք, որոնք հատկանշված են ՌՆ 3. a. կետում:</p>	<p>քան 500 մ:</p> <p><u>Նկարագիր 1</u> Հատուկ նախագծված բաղադրամասերի մեջ, որոնք հատկանշված են ՌՆ 3. կետում մտնում են. a. Մետաղյա կամ պլաստիկ նյութից այնպիսի հարմարանքներ, ինչպես խանձոցի հենակները, փամփուշտի կափարիչներ, կասետային պահունակների հանգուցիչներ, պտտվող ժապավենային պահունակներ և զինամթերքի մետաղական մասեր, b. Պահպանական և նշանատող սարքեր, խանձոցներ կամ պայթուցիչներ, սենսորներ և արձակման սարքեր, c. Հոսանքի աղբյուրներ մեկ անգամյա բարձր աշխատանքային լիցքով, d. հրկիզվող կաղապարներ լիցքերի համար, e. ենթագինամթերք, ներառյալ մեծ նոնակների և ականների մեջ տեղադրվող փոքր նոնակներ և ականներ և սահմանափակ տնողությամբ ուղղորդվող հրթիռներ: <u>Նկարագիր 2</u> ՌՆ 3. a. կետը չի վերաբերում այն զինամթերքին, որն անպիտան է հեռաձգման համար (blank star/ուսումնական փամփուշտ) և ուսումնական զինամթերքին, որոնց լիցքային տուփը ծակված է: <u>Նկարագիր 3</u> ՌՆ 3. a. կետը չի վերաբերում այն զինամթերքին, որոնք հատուկ նախագծված են հետևյալ նպատակներից որևէ մեկի համար. a. ազդանշանել, b. թռչուններ վախեցնել, կամ c. նավթային հորերի գազային արտանետումների հրկիզում:</p>
<p>ՌՆ 4. 360200000 360300 360490000 9306 901420 901480000 901490000 901510</p>	<p>Ռումբեր, տորպեդոներ, հրթիռներ, հեռահար հրթիռներ, այլ պայթուցիչ սարքեր և լիցքեր և հարակից սարքավորումներ և հավելյալ հարմարանքներ, ինչպես նշված է ստորև, և նրանց համար հատուկ նախագծված բաղադրամասեր. a. Ռումբեր, տորպեդոներ, նոնակներ, ծխահարող տուփեր, տարողություններ (նոնակներ), հրթիռներ, ականներ, դեկավարվող հրթիռներ, խորքային լիցքեր, կառուցաքանդման լիցքեր, կառուցաքանդման սարքեր, կառուցաքանդման ամբողջական լրակազմեր, «պիրոտեխնիկական» սարքեր, փամփուշտներ և սիմուլյատորներ (այսինքն, սարքավորում, որը նմանակում է վերոհիշյալ ապրանքներից որևէ մեկի հատկանիշները), որոնք հատուկ նախատեսված են ռազմական օգտագործման համար, b. Այն սարքավորումը, որն ունի բոլոր հետևյալ հատկանիշները. 1. հատուկ նախագծված է ռազմական օգտագործման համար, և 2. հատուկ նախագծված է կիրառելու, վերահսկելու, գործարկելու, միանգամյա աշխատանքային արդյունքով լիցքավորելու, արձակելու, տեղադրելու, փչելու, լիցքաթափելու, թաքցնելու կամ շեղելու, խաթարելու, դետոնացնելու, ընդհատելու, շարքից դուրս հանելու կամ բացահայտելու որևէ մեկը հետևյալներից. a. այն առարկաները կամ պարագաները, որոնք հատկանշված են ՌՆ 4. a. կետում կամ b. իմպլոմվիզացված պայթուցիչ սարքերը (IEDs). c. Օդային կառավարվող հրթիռներից պաշտպանող համակարգեր (AMPS). 2. Օդային կառավարվող հրթիռներից պաշտպանող</p>	<p><u>Հատուկ նկարագիր. 1.</u> Ուղղորդող և հեռակառավարող սարքավորման համար տես ՌՆ 11. կետը, <u>Հատուկ նկարագիր. 2.</u> Օդային հրթիռներից պաշտպանող համակարգերի համար (AMPS), տես ՌՆ 4. c կետը: <u>Նկարագիր ՌՆ .</u> a. կետը ներառնում է. a. Օդային նոնակները, արկեր, հրկիզող ռումբերը և պայթուցիչ սարքերը. b. դեկավարվող հրթիռների հրամադները և կրկնակի մուտքի փոխադրասարքերի ծայրագլխիկները: <u>Նկարագիր 1</u> ՌՆ 4. b. կետը ներառնում է. a. շարժական գազահեղուկացնող սարքավորումը, որը կարող է արտադրել օրական 1000 կգ կամ ավելի հեղուկացված գազ, b. Լողացող կամ չտուգվող էլեկտրական հոսանք հաղորդող մալուխը, որը հարմար է մագնիսական ականներ վնասագործելու համար: <u>Նկարագիր 2</u> ՌՆ 4. b. կետը չի վերաբերում ձեռքով աշխատեցվող այնպիսի սարքերին, որոնք նախագծված են սահմանափակ օգտագործման համար և կարող են միայն մետաղյա առարկաներ բացահայտել և չեն կարող տարբերել ականները այլ մետաղական առարկաներից: <u>Նկարագիր ՌՆ 4.</u> c. կետը չի վերաբերում Օդային կառավարվող հրթիռներից պաշտպանող համակարգերին (AMPS),</p>

		<p>համակարգերը (AMPS) հատուկ պաշտպանություն են կիրառում, որը կոչված է կանխարգելելու չլիազորված մուտքը կամ միջամտությունը նրանց ծրագրային ապահովման մեջ, և</p> <p>3.Օդային կառավարվող հրթիռներից պաշտպանող համակարգերը (AMPS) ակտիվ մեխանիզմ են պարունակում, որը ստիպում է համակարգին չգործել, երբ այն հեռացված է «Քաղաքացիական ինքնաթիռից», որի մեջ ի սկզբանե տեղադրված էր եղել:</p> <p>որոնք ունեն հետևյալ հատկանիշները.</p> <p>a.Ունեն հետևյալ հակահրթիռային ազդանշանող սենսորներից որևէ մեկը.</p> <p>1.պասիվ սենսորներ, որոնց զագակետային արձագանքը լինում է 100-400 ծովային մղոնի շրջանում, կամ</p> <p>2.ակտիվ իմպուլսային Դոպլեր տեսակի հակահրթիռային ազդանշանման սենսորներ,</p> <p>b.Արգելակող կամ խափանող ռադիոճառագայթներ տարածող համակարգեր,</p> <p>c.Լուսային ազդանշաններ, որոնք ունեն տեսանելի հետագիծ և ինֆրակարմիր հետագիծ, ցամաքից օդ հեռահար հրթիռների շեղելու համար և</p> <p>d.«Քաղաքացիական ինքնաթիռների» վրա տեղադրված և հետևյալ բոլոր հատկանիշներն ունեցող.</p> <p>1.Օդային կառավարվող հրթիռներից պաշտպանող համակարգերը (AMPS) գործարկելի են հատուկ «Քաղաքացիական ինքնաթիռների» մեջ, որոնցում հատուկ Օդային կառավարվող հրթիռներից պաշտպանող համակարգեր (AMPS) են տեղադրված և որոնց համար նախատեսվել է հետևյալից որևէ մեկը.</p> <p>a.Քաղաքացիական տեսակի հավաստագիր կամ</p> <p>b.Համարձեք մի փաստաթուղթ, որն ընդունվում է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) կողմից:</p> <p>2.Օդային կառավարվող հրթիռներից պաշտպանող համակարգերը (AMPS) հատուկ պաշտպանություն են կիրառում, որը կոչված է կանխարգելելու չլիազորված մուտքը կամ միջամտությունը նրանց ծրագրային ապահովման մեջ, և</p> <p>3.Օդային կառավարվող հրթիռներից պաշտպանող համակարգերը (AMPS) ակտիվ մեխանիզմ են պարունակում, որը ստիպում է համակարգին չգործել, երբ այն հեռացված է «Քաղաքացիական ինքնաթիռից», որի մեջ ի սկզբանե տեղադրված էր եղել:</p> <p>Նկարագիր ՌՆ 4.</p> <p>c. կետը չի վերաբերում Օդային կառավարվող հրթիռներից պաշտպանող համակարգերին (AMPS), որոնք ունեն հետևյալ հատկանիշները. a.Ունեն հետևյալ հակահրթիռային ազդանշանող սենսորներից որևէ մեկը.</p> <p>1.պասիվ սենսորներ, որոնց զագակետային արձագանքը լինում է 100-400 ծովային մղոնի շրջանում, կամ</p> <p>2.ակտիվ իմպուլսային Դոպլեր տեսակի հակահրթիռային ազդանշանման սենսորներ,</p> <p>b.Արգելակող կամ խափանող ռադիոճառագայթներ տարածող համակարգեր,</p> <p>c.Լուսային ազդանշաններ, որոնք ունեն տեսանելի հետագիծ և ինֆրակարմիր հետագիծ, ցամաքից օդ հեռահար հրթիռների շեղելու համար և</p> <p>d.«Քաղաքացիական ինքնաթիռների» վրա տեղադրված և հետևյալ բոլոր հատկանիշներն ունեցող.</p> <p>1.Օդային կառավարվող հրթիռներից պաշտպանող համակարգերը (AMPS) գործարկելի են հատուկ «Քաղաքացիական ինքնաթիռների» մեջ, որոնցում հատուկ Օդային կառավարվող հրթիռներից պաշտպանող համակարգեր (AMPS) են տեղադրված և որոնց համար նախատեսվել է հետևյալից որևէ մեկը.</p> <p>a.Քաղաքացիական տեսակի հավաստագիր կամ</p>
--	--	---

			<p>բ.Համարժեք մի փաստաթուղթ, որն ընդունվում է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) կողմից:</p>
ՌՆ 5.	<p>85255000 85256000 8526 852721 852691 85269200 902300800 901310000</p>	<p>Կրակի ղեկավարման և դրան առնչվող ազդանշանային և զգուշացնող սարքավորումներ և հարակից համակարգեր, փորձարկման և տեղայնացման և արգելակող կամ խափանիչ սարքավորում, ինչպես նշված է ստորև, որոնք հատուկ նախագծված են ռազմական օգտագործման համար, և դրանց հատուկ նախագծված բաղադրիչները և հավելյալ հարմարանքները. ա. Ձեռքերի օպտիկական մասեր, ռմբանետման համակարգիչներ, հրանոթների ուղղորդման սարքավորում և զենքերի վերահսկման համակարգեր, բ. Նշանառման, նպատակառոտման, տարածության չափման, հետախուզման կամ հետապնդման համակարգեր, բացահայտման, տվյալների ամբողջականացման, ճանաչման կամ ինքնության հաստատման սարքավորում և սենսորների միացման սարքավորում: գ. Խափանող սարքավորում այն պարագաների համար, որոնք հատկանշված են ՌՆ 5. ա. կամ ՌՆ 5.բ. կետերում, դ. Դաշտային փորձարկման կամ տեղայնացման սարքավորումներ, որոնք հատուկ նախագծված են այն առարկաների կամ պարագաների համար, որոնք հատկանշված են ՌՆ 5.ա. կամ ՌՆ 5.բ. կետերում:</p>	
ՌՆ 6.	<p>870210119 870290119 870290319 870310180 870331109 870410108 870410900 870421100 870422100 870423 870431100 870510001 870510009 870590 870790900 870810900 870829 870911100 870911900 870919 870990000 871610990 871620000 871690900 871639590</p>	<p>Վերգետնյա փոխադրամիջոցներ և դրանց բաղադրիչ մասեր, ինչպես նշված է ստորև :</p>	<p>Հատուկ նկարագիր. Ուղղորդման և նավիգացիոն սարքավորման համար տես ՌՆ 11. կետը: ա. Վերգետնյա փոխադրամիջոցներ և դրանց բաղադրիչ մասերը, որոնք հատուկ նախագծված կամ փոփոխված են ռազմական օգտագործման համար, Տեխնիկական նկարագիր ՌՆ 6. ա. կետի նպատակներով վերգետնյա փոխադրամիջոցներ եզրի մեջ մտնում են նաև ավտոկցորդիչները (թրեյլերները): բ. Բարձր անցունակության փոխադրամիջոցներ, որոնք կարող են օգտագործվել արտաճանապարհային պայմաններում, որոնք արտադրվել են կամ համալրվել այնպիսի նյութերով, որոնք կարող են պաշտպանել III մակարդակի բալիստիկ հրթիռներից (NIJ 0108.01, 1985թ. սեպտեմբեր կամ համեմատելի ազգային ստանդարտով) կամ ավելի բարձր մակարդակի: Հատուկ նկարագիր.Տես նաև կետ ՌՆ 13.ա. Նկարագիր 1 ՌՆ 6. ա. կետը ներառում է: ա.Տանկերը և այլ ռազմական զրահապատ փոխադրամիջոցները և այն ռազմական փոխադրամիջոցները, որոնց վրա տեղադրված են զենք կրելու հարմարանքներ կամ սարքավորում ականներ տեղադրելու համար, կամ զինամթերք արձակելու համար, որոնք հատկանշված են ՌՆ 4 կետում, բ.Ջրահապատ փոխադրամիջոցներ. գ.«Երկկենցաղ» այսինքն ցամաքում և ջրի մեջ շարժվող և խոր ջրի մեջ շարժվող փոխադրամիջոցներ, դ.Վերանորոգման կամ տարհանման փոխադրամիջոցներ և քարշակներ, զինամթերք կամ զենքի համակարգեր փոխադրող փոխադրամիջոցներ և դրանց հարակից բեռնաթափող կամ բեռնող սարքավորումները: Նկարագիր 2 Վերգետնյա փոխադրամիջոցների փոփոխությունը ռազմական օգտագործման համար,</p>

			<p>որոնք հատկանշված են ML6. a. կետում, ենթադրում են կառուցվածքային, էլեկտրական կամ մեխանիկական փոփոխություններ, որոնք կատարվում են մեկ կամ ավելի բաղադրամասերի վրա, որոնք հատուկ նախագծված են ռազմական օգտագործման համար. Այդ բաղադրամասերի մեջ են մտնում.</p> <p>a. Դողերի այնպիսի պնևմատիկ անվային կաղապարները, որոնք հատուկ նախագծված են փամփշտադիմացկուն լինելու կամ ծակված վիճակում շարժումը շարունակելու համար:</p> <p>b. Դողերի լցման ճնշման վերահսկող համակարգերը, որոնք աշխատեցվում են շարժվող մեքենայի ներսից:</p> <p>c. Փոխադրամիջոցների կենսունակության ապահովման մասերի գրահապատ վահանները (օրինակ. վառելիքի բաքերի կամ անձնակազմի համար նախատեսված մասերի),</p> <p>d. Ջենքերի համար հատուկ ուժեղացված մասերը կամ ամրակները, e. Լուսաբողարկող հարմարանքները.</p> <p><u>Նկարագիր 3 ՌՆ 6.</u> կետը չի վերաբերում քաղաքացիական ավտոմեքենաներին կամ բեռնատարներին, որոնք նախագծված կամ վերափոխված են դրամ կամ արժեքավոր պարագաներ տեղափոխելու համար և ունեն գրահապատ կամ հակաբալիստիկ պաշտպանություն:</p>
<p><u>Նկարագիր Քիմիկատները տրված են անունով և իրենց համապատասխան CAS[1] թվով:</u> Ցանկը վերաբերում է միևնույն կառուցվածքային բանաձև ունեցող քիմիկատներին (ներառյալ հիդրատները կամ ջրածնաթթուները) անկախ անունից կամ CAS թվից: CAS թվերը տրված են միայն որոշակի քիմիկատի կամ խառնուրդի ճանաչումը հեշտացնելու համար, անկախ եզրաբանական ցանկի: CAS թվերը չեն կարող օգտագործվել որպես նյութի ինքնուրույն բացարձակ բացահայտիչներ, որովհետև թվարկված քիմիկատների որոշ ձևեր տարբեր CAS թվեր ունեն, և թվարկված քիմիկատներից պարունակող խառնուրդները նույնպես կարող են տարբեր CAS թվեր ունենալ:</p>			
<p>ՌՆ 7.</p>	<p>381700500 381700800 290311000 290312000 290313000 290314000 290315000 290319100 290319800 290321000 290322000 290323000 290339 284440100 284440200 284440300 284440800 280110000 280610000 280620000 271114000 271119000 290122000 300220000 300290 290121000 290122000 290123100 290123900 290124100 290211000 281119200</p>	<p>Քիմիական կամ կենսաբանական թունավոր նյութեր, «ոչ վերահսկվող նյութեր», ռադիոակտիվ նյութեր, հարակից սարքավորումներ, բաղադրամասեր և նյութեր, ինչպես նշված է ստորև:</p> <p>a. Կենսաբանական նյութերը և ռադիոակտիվ նյութերը, որոնք «հարմարեցված են պատերազմում կիրառվելու համար» մարդկային զոհեր, կորուստներ կամ կենդանական կորուստներ պատճառելու նպատակով, նաև սարքավորումներ շարքից հանելու, գյուղատնտեսական բերքը կամ շրջակա միջավայրը վնասելու համար:</p> <p>b. Քիմիական զինանյութեր (CW), ներառյալ 1. Քիմիական զինանյութ նյարդային ազնոտները:</p> <p>a. O-Ալքիլ (հավասար կամ ավելի պակաս, քան C10, ներառյալ ցիկլոալքիլ) ալքիլ (մեթիլ, էթիլ, էն-պրոպիլ կամ իզոպրոպիլ) – ֆոսֆոնոֆլուորիդատները, ինչպես օրինակ. Ջարինը (GB): O-գոպրոպիլֆոսֆոնոֆլուորիդատը (CAS 107-44-8), և Ջոմանը (GD): O-Ֆինակոլիլ մեթիլֆոսֆոնոֆլուորիդատը (CAS 96-64-0),</p> <p>b. O-Ալքիլ (հավասար կամ ավելի պակաս, քան C10, ներառյալ ցիկլոալքիլը) N,N-դիալքիլ (մեթիլ, էթիլ, n-պրոպիլ կամ իզոպրոպիլ) ֆոսֆորամիդոցիանիդատները, ինչպես օրինակ Տաբուն (GA): O-էթիլ N,N-դիմեթիլֆոսֆորամիդոցիանիդատը (CAS 77-81-6),</p> <p>c. O-Ալքիլ (H կամ հավասար կամ ավելի պակաս, քան C10, ներառյալ ցիկլոալքիլը) S-2-դիալքիլ (մեթիլ, էթիլ, n-պրոպիլ կամ իզոպրոպիլ)–ամինոէթիլ ալքիլ (որոնք արտադրվել են որպես մեթիլ, էթիլ, էնպրոպիլ կամ իզոպրոպիլ) ֆոսֆոնոթիուրատները և համապատասխան ալքիլատները և պրոտոնացված</p>	<p><u>Նկարագիր 1 ՌՆ 7.</u> d. կետը չի վերաբերում «չվերահսկվող ազնոտներին», որոնք առանձին փաթեթավորված են անձնական ինքնապաշտպանության նպատակներով:</p> <p><u>Նկարագիր 2 ՌՆ 7.</u> d. կետը չի վերաբերում ակտիվ բաղադրակազմով քիմիկատներին և միացություններին, որոնք պիտակավորված և փաթեթավորված են հատուկ սննդի արդյունաբերության համար կամ բժշկական նպատակներով:</p> <p><u>Նկարագիր ՌՆ 7.</u> f.1. կետը ներառում է.: a. Օդորակման սարքեր, որոնք հատուկ նախագծված կամ փոփոխված են միջուկային, կենսաբանական կամ քիմիական ֆիլտրացման համար. b. Պաշտպանական հագուստ.</p> <p><u>Հատուկ նկարագիր.</u> Քաղաքացիական գազային դիմակների, պաշտպանական և պիտահանող սարքավորման համար տես նաև 1.ա.4. կետը Երկակի օգտագործման ցանկի մասին:</p> <p><u>Նկարագիր ՌՆ 7.</u> g. կետը չի վերաբերում ճառագայթման անձնական վերահսկման դոզիմետրերին:</p> <p><u>Հատուկ նկարագիր.</u> Տես նաև 1.ա.4. կետը Երկակի օգտագործման ցանկի մասին.</p> <p><u>Նկարագիր 1 ՌՆ 7.</u> b. և ՌՆ 7.d. կետերը չեն վերաբերում հետևյալին. a. Ցիանոգեն քլորիդ (CAS 506-77-4), b. Հիդրոցիանիկ թթու (CAS 74-90-8), c. Հրորին (CAS 7782-50-5), d. Կարբոնիլ քլորիդ (ֆոսգեն) (CAS 75-44-5), e. Դիֆոսգեն (տրիքլորոմեթիլ-քլորոֆորմատ) (CAS 503-38-8), f.2ի օգտագործվում 2004թ. -ից ի վեր</p>

<p>281119800 283720000</p>	<p>աղերը, ինչպես օրինակ. VX: Օ-էթիլ Տ-2- դիզոպրոպիլամինոէթիլ մեթիլ ֆոսֆոնոթիոլատը (CAS 50782-69-9), 2.Քիմիական զինանյութեր a.Օծմբային մանանեխները, ինչպես օրինակ. 1.2- Բլորոէթիլքլորոմեթիլսուլֆիդ (CAS 2625-76-5), 2.Բիս (2- քլորոէթիլ) սուլֆիդ (CAS 505-60-2), 3.Բիս (2- քլորոէթիլթիո) մեթան (CAS 63869-13-6), 4.1,2-բիս (2- քլորոէթիլթիո) էթան (CAS 3563-36-8), 5.1,3- բիս (2- քլորոէթիլթիո) -էն-պրոպան (CAS 63905-10-2), 6.1,4- բիս (2- քլորոէթիլթիո) -էն-բուտան (CAS 142868-93-7) , 7.1,5- բիս (2- քլորոէթիլթիո)-էն-պենտան(CAS 142868- 94-8), 8.Բիս (2- քլորոէթիլթիոմեթիլ) էթեր (CAS 63918- 90-1), 9.Բիս (2- քլորոէթիլթիոէթիլ) էթեր (CAS 63918- 89-8), b.Լյուիսիտները, ինչպես օրինակ. 1.2- քլորոպինիլդիքլորոարսին (CAS 541-25-3), 2.Թրիս (2- քլորոպինիլ) արսին (CAS 40334-70-1), 3.Բիս (2- քլորոպինիլ) քլորոարսին (CAS 40334-69-8), ՌՆ 7. b.2. c. Ազոտային մանանեխներ, ինչպես օրինակ. 1.HN1: բիս (2-քլորոէթիլ) էթիլամին (CAS 538-07-8), 2.HN2: բիս (2- քլորոէթիլ) մեթիլամին (CAS 51-75-2), 3.HN3: բիս (2- քլորոէթիլ) ամին (CAS 555-77-1), 3.Քիմիական զինանյութեր/ անդամալուծող ազենտներ, ինչպես օրինակ. a.3-Քվինոքսիլինիլ բենզիլատ (BZ) (CAS 6581-06-2), 4.Քիմիական զինանյութեր/ տերևաթափող ազենտներ, ինչպես օրինակ. a.Բուրի 2-քլորո-4-ֆլուորոֆենոքսիացելատ (LNF), b.2,4,5-տրիքլորոֆենոքսիացետիլ թթու խառնված 2,4- դիքլորոֆենոքսիացետիլ թթվի հետ (Օրանժ), c. Քիմիական զինանյութեր/ բինար նախանյութեր և հիմնական նախանյութեր, ինչպես նշված է ստորև : 1.Ալքիլ (մեթիլ, էթիլ, էն-պրոպիլ կամ իզոպրոպիլ) ֆոսֆոնիլ դիֆլուորիդներ, ինչպես օրինակ. DF` Մեթիլ ֆոսֆոնիլդիֆլուորիդ (CAS 676-99-3), 2.Օ-Ալքիլ (H կամ հավասար կամ ավելի քիչ քան C10, ներառյալ ցիկլոպրիլ) Օ-2-դիալքիլ (մեթիլ, էթիլ, էն-պրոպիլ կամ իզոպրոպիլ) ամինոէթիլ ալքիլ (մեթիլ, էթիլ, էն- պրոպիլ կամ իզոպրոպիլ) ֆոսֆոնիտներ և համապատասխան ալքիլացված և պրոտոնացված աղեր, ինչպես օրինակ. QL: Օ-էթիլ-2-դի- իզոպրոպիլամինոէթիլ մեթիլֆոս-ֆոնիտ (CAS 57856- 11-8), 3.Քլորոզարին. Օ-իզոպրոպիլ մեթիլֆոսֆոնոքլոր-րիդատ (CAS 1445-76-7), 4.Քլորոզոման. Օ-պինաքոլիլ մեթիլֆոսֆոնոքլորիդատ (CAS 7040-57-5), d.«Անկարգություններ կարգավորող ազենտներ», ակտիվ բաղադրության քիմիկատներ և ներառյալ դրանց միացությունները. 1.a-Բրոմոբենզենացետոնիտրիլ, (Բրոմոբենզիլ ցիանիդ) (CA) (CAS 5798-79-8), 2.[(2-քլորոֆենիլ) մեթիլեն] պրոպանեդիլիտրիլ, (օ- քլորոբենզիլդենեմալոնոնիտրիլ) (CS) (CAS 2698-41- 1), 3.2-Քլորո-1-ֆենիլէթանոն, Ֆենիլացիլիլ քլորիդ (w- քլորոացետոֆենոն) (CN) (CAS 532-27-4), 4.Դիբենզ-(b.f)-1,4-օքսազեֆին, (CR) (CAS 257-07-8), 5.10-Քլորո-5,10-դիհիդրոֆենոարսազին, (Ֆենարսազին քլորիդ), (Ադամսիտ), (DM) (CAS 578-94- 9), 6.N-Նոնանոլիմոթիոլին, (MPA) (CAS 5299-64-9), ՌՆ 7.e.Սարքավորում, որը հատուկ նախագծված կամ փոփոխված է ռազմական օգտագործման համար, նախագծված կամ փոփոխված է հետևյալից որևէ մեկը տարածելու համար, և դրանց համար հատուկ</p>	<p>g.Քսիլիլ բրոմիդ, օրթո: (CAS 89-92-9), մեթա (CAS 620- 13-3), պարա (CAS 104-81-4), h.Բենզիլ բրոմիդ (CAS 100-39-0), i.Բենզիլ յոդիդ (CAS 620-05-3), j.Բրոմոն ացետոն (CAS 598-31-2), k.Ֆիանոզեն բրոմիդ (CAS 506-68-3), l.Բրոմոն մեթիլէթիլէտոն (CAS 816-40-0), m.Քլորոն ացետոն (CAS 78-95-5), n.Էթիլ յոդոացետատ (CAS 623-48-3), o.Յոդո ացետոն (CAS 3019-04-3), p.Քլորոպիկրին (CAS 76-06-2). Նկարագիր 2 Բջջիների տեսակները և կենսաբանական համակարգերը, որոնք հատկանշված են ՌՆ 7. h. և ՌՆ 7. i.2. կետերում բացատրիկ են և այս ենթակետերը չեն վերաբերում այն բջջիներին կամ կենսաբանական համակարգերին, որոնք օգտագործվում են քաղաքացիական նպատակներով, ինչպես օրինակ գյուղատնտեսական, դեղագործական, բժշկական, անասնաբուժական, բնապահպանական, աղբահեռացման կամ սննդի արտադրության բնագավառներում:</p>
--------------------------------	--	---

		<p>նախագծված բաղադրամասերը.</p> <p>1.Նյութեր կամ ազենտներ, որոնք հատկանշված են ՌՆ 7. a., ՌՆ 7. b. կամ d. կետերում կամ 2.Քիմիական զինանյութերի ազենտներ, որոնք պատրաստված են այն նախանյութերից, որոնք հատկանշված են ՌՆ 7. c. կետում:</p> <p>f.Պաշտպանական և ախտազերծող սարքավորումներ, որոնք հատուկ նախագծված կամ փոփոխված են ռազմական օգտագործման համար, դրանց բաղադրամասերը և քիմիական խառնուրդները, ինչպես նշված է ստորև. 1.Սարքավորում, որը նախագծված կամ փոփոխված է այնպիսի նյութերի դեմ պաշտպանվելու համար, որոնք հատկանշված են ՌՆ 7. a., ՌՆ 7.</p> <p>b. կամ d. կետերում և դրանց համար հատուկ նախագծված բաղադրիչներ.</p> <p>2.Սարքավորում, որը նախագծված կամ փոփոխված է այն առարկաները ախտազերծելու համար, որոնք ախտահարվել են այնպիսի նյութերով, որոնք հատկանշված են ՌՆ 7.</p> <p>a. կամ ՌՆ 7. b., կետերում և դրանց համար հատուկ նախագծված բաղադրիչները.</p> <p>3.Քիմիական խառնուրդներ որոնք հատուկ մշակվել են կամ ձևավորվել այն առարկաները ախտազերծելու համար, որոնք ախտահարվել են այնպիսի նյութերով, որոնք հատկանշված են ՌՆ 7. a. կամ ՌՆ 7. b. կետերում.</p> <p>g.Սարքավորում, որը հատուկ նախագծված կամ փոփոխված է ռազմական օգտագործման համար, նախագծված կամ փոփոխված է այնպիսի նյութերի բացահայտման կամ ճանաչման համար, որոնք հատկանշված են ՌՆ 7. a., ՌՆ 7.</p> <p>b. կամ d.կետերում, և դրանց համար հատուկ նախագծված բաղադրիչները,</p> <p>h.«Բիոպոլիմերներ», որոնք հատուկ նախագծված կամ մշակված են քիմիական զինանյութերի ազենտների բացահայտման և ճանաչման համար, որոնք հատկանշված են ՌՆ 7. b. կետում, և այն հատուկ բջիջների տեսակները, որոնք օգտագործվում են դրանց արտադրության համար:</p> <p>i.«Բիոկատալիստներ» քիմիական զինանյութերի ազենտների ախտահանման կամ վնասազերծման համար և հարակից կենսաբանական համակարգեր, ինչպես նշված է ստորև. 1.«Բիոկատալիստներ», որոնք հատուկ նախագծված են քիմիական զինանյութերի ազենտների ախտահանման կամ վնասազերծման համար, որոնք հատկանշված են ՌՆ 7. b. կետում և ստեղծվել են կենսաբանական համակարգերի ուղղորդված լաբորատոր սելեկցիայի կամ գենետիկ փոխակերպումների արդյունքում:</p> <p>2.Կենսաբանական համակարգեր, ինչպես նշված է ստորև : «Էքսպրեսիոն վեկտորներ», վիրուսներ կամ բջիջների տեսակներ, որոնք պարունակում են գենետիկ տեղեկություն, որը հատկորոշ է այն «բիոկատալիստների» արտադրության համար, որոնք հատկանշված են ՌՆ 7. i.1. կետում: ՌՆ 7. շարունակությունը.</p>	
--	--	--	--

<p>ՌՆ 8. 810430000 810920000 280450100 284990100 282510000 283429800 290490400 760310000 810920000 811212000 280450100 810430000 811212000 810920000 281129300 281129900 290559 292144000 293100950 810890 760429900 760820890 810890500 810890600 810890900 810411000 282619100 282619900 360200000 750400000 750810000 292090850 281210110 293100100 293100200 293100950 292090200 281210150 292090300 281210910 282590 282510000 271011700 271011900 271019210 293369100 293369800 282630000 282690100 290339900 290345 290346100 262091000 282590200 283429200 8112 262099200 262099600 282300000 283311000 283322000 283329300 283329500 283329600 283329900</p>	<p>«Էներգետիկ նյութերը» և հարակից նյութերը, ինչպես նշված է ստորև. a.«Պայթուցիկները» ինչպես նշված է ստորև և դրանց խառնուրդները. 1.ADNBF (ամինոդինիտրոբենզոֆուորոքսան կամ 7-ամինո-4,6-դինիտրոբենզոֆուորազան-1-օքսիդ) (CAS 97096-78-1 97096-78-1), 2.BNCP (ցիս-բիս (5-նիտրոտետրազոլատո) տետրա ամինո-կոբալտ (III) պերբորատ) (CAS 117412-28-9), 3.CL-14 (դիամանո դինիտրոբենզոֆուորոքսան կամ 5,7-դիամանո-4,6-դինիտրոբենզոֆուորազան-1-օքսիդ) (CAS 117907-74-1), 4.CL-20 (HNIW կամ հեքսանիտրոհեքսաազախվուրտցիտան) (CAS 135285-90-4), քլատրատներ CL-20 կարգի (տես նաև ՌՆ 8.g.3. կետը և g.4. կետը դրա «նախանյութերի» համար), 5.CP (2-(5-ցիանոտետրազոլատո) պենտա ամին-կոբալտ (III) պերբորատ) (CAS 70247-32-4), 6.DADE (1,1-դիամինո-2,2-դինիտրոդեֆոլին, FOX7), 7.DATB (դիամինոտրինիտրոբենզոլ) (CAS 1630-08-6), 8.DDFP (1,4-դինիտրոդիֆուորազապիլերազին), 9.DDPO (2,6-դիամինո-3,5-դինիտրոպիրազին-1-օքսիդ, PZO) (CAS 194486-77-6), 10.DIPAM (3,3Յ-դիամանո-2,2Յ,4,4Յ,6,6Յ-հեքսանիտրոբիֆենիլ կամ դիպիկրամիդ) (CAS 17215-44-0), 11.DNGU (DINGU կամ դինիտրոզիկտրոլի) (CAS 55510-04-8), 12.Ֆուրազաններ, ինչպես նշված է ստորև. a.DAAOF (դիամինոազոբսիֆուրազան), b.DAAzF (դիամինոազոֆուրազան) (CAS 78644-90-3), 13.HMX և ածանցյալներ (տես նաև ՌՆ 8.g.5. կետը դրա «նախանյութերի» համար), ինչպես նշված է ստորև : a.HMX (Յիկլոտետրամեթիլենտետրանիտրամին, օկտահիդրո-1,3,5,7-տետրանիտրո-1,3,5,7-տետրազին, 1,3,5,7-տետրանիտրո-1,3,5,7-տետրազա-ցիկլոտկտան, օկլոգեն կամ օկտոգեն) (CAS 2691-41-0), b.HMX-ի դիֆլուորոամինացված անալոգներ, c.K-55 (2,4,6,8-տետրանիտրո-2,4,6,8-տետրա-ազաբիցիկլո [3,3,0]-օկտանոն-3, տետրանիտրոսենիգիկտրիլ կամ կետո-բիցիկլային HMX) (CAS 130256-72-3), 14.HNAD (հեքսանիտրոադամանտան) (CAS 143850-71-9), 15.HNS (հեքսանիտրոստիլբեն) (CAS 20062-22-0), ML8. a.16. Իմիդազոլներ, ինչպես նշված է ստորև. a.BNNII (Օկտահիդրո-2,5-բիս (նիտրոմինո) իմիդազոլ [4,5-d] իմիդազոլ), b.DNI (2,4-դինիտրոմիդազոլ) (CAS 5213-49-0), c.FDIA (1-ֆլուորո -2,4-դինիտրոմիդազոլ), d.NTDNIA (N-(2-նիտրոտրիազոլ)-2,4-դինիտրոմիդազոլ), e.PTIA (1-պիկրիլ-2,4,5-տրինիտրոմիդազոլ), 17.NTNMH (1-(2-նիտրոտրիազոլ)-2-դինիտրոմեթիլեն հիդրազին), 18.NTO (ONTA կամ 3-նիտրո-1,2,4-տրիազոլ-5-մեկ) (CAS 932-64-9), 19.Պոլինիտրոկուբաններ ավելի քան չորս նիտրո խմբերով, 20.PYX (2,6-Բիս(պիկրիլամինո)-3,5-դինիտրոպիրիդին) (CAS 38082-89-2), 21.RDX և ածանցյալներ, ինչպես նշված է ստորև: a.RDX (ցիկլոտրինիտրոլենտետրինիտրամին, ցիկլոնիտ, T4, հեքսահիդրո-1,3,5-տրինիտրո-1,3,5-տրիազին, 1,3,5-տրինիտրո-1,3,5-տրիազա-ցիկլոհեքսան, հեքսոգեն կամ հեքսոգեն) (CAS 121-82-4),</p>	<p><i>Հատուկ նկարագիր. Տես նաև 1. c.11. Երկակի օգտագործման ցանկի մասին. Տեսնիկական նկարագիր</i> 1. ՌՆ 8. կետի նպատակներով, խառնուրդը վերաբերում է երկու կամ ավելի նյութերի սիստեմային, որոնցից առնվազն մեկը թվարկված է ՌՆ 8 կետի ենթակետերում: 2. ՌՆ 8 կետի ենթակետերում նշված ցանկացած նյութ պետք է լինի այս ցանկում, նույնիսկ եթե այն օգտագործվել է հատկանշվածից տարբեր կիրառման մեջ (օրինակ. TAGN-ը հիմնականում օգտագործվում է որպես պայթուցիկ, բայց կարող է նաև օգտագործվել կամ որպես վառելիք կամ որպես օքսիդացնող: Նկարագիր 1 Բնթնաթիռային վառելիքներ, որոնք հատկանշված են ՌՆ 8. c.1. կետում, վերջնական արտադրանքներ են, և ոչ դրանց փոխարինողներ: Նկարագիր 2 ՌՆ 8. c.4. a. կետը չի վերաբերում հիդրազինի խառնուրդներին, որոնք հատուկ կազմված են կորրոզիայի վերահսկման համար: Նկարագիր 3 ՌՆ 8. c.5 կետը վերաբերում է պայթուցիկներին և վառելիքներին, մետաղական կամ կամ ոչ մետաղական կամ այրումնիմոմի, մագնեզիումի, ցիրկոնիումի կամ բերիլիումի մեջ ինկապտուլացված/ներպատիճավորված համաձուլվածքներին: Նկարագիր 4 ՌՆ 8. c.5. b.2. կետը չի վերաբերում բորին և բորի կարբիդին, որը հարստացված է բոր-10-ով (20% կամ ավելի բոր-10 պարունակությամբ): Նկարագիր 1 ՌՆ 8.d.3. կետը չի վերաբերում քլորինտրիֆլուորիդին. Նկարագիր 2 ՌՆ 8.d.3. կետը չի վերաբերում ազոտային տրիֆլուորիդին վերջինիս զագային վիճակում: Նկարագիր ՌՆ 8.d.10. կետը չի վերաբերում ոչ ինհիբացված փրփրող ազոտային թթվին: ՌՆ 8.e.Մածոդ/կապող, պլաստիկացնող, մոնոմեր և պոլիմեր նյութեր, ինչպես նշված է ստորև. 1.AMMO (ազիդոմեթիլմեթիլօքսետան և դրա պոլիմերները) (CAS 90683-29-7 90683-29-7) (տես նաև ML8.g.1. կետը ենախանյութերի” համար), 2.BAMO (բիսազիդոմեթիլօքսետան և դրա պոլիմերները) (CAS 17607-20-4) (տես նաև ՌՆ 8.g.1. կետը դրա «նախանյութերի» համար), 3.BDNPA (բիս (2,2-դինիտրոպրոպիլ)ացետալ) (CAS 5108-69-0), 4.BDNPF (բիս (2,2-դինիտրոպրոպիլ) ֆորմալ) (CAS 5917-61-3), 5.BTTN (բուտանտրիոլտրինիտրատ) (CAS 6659-60-5) (տես նաև ՌՆ 8.g.8. կետը դրա «նախանյութերի» համար), Հատուկ նկարագիր ՌՆ 8.g. կետում հղումները հատկորշված են որպես «Էներգատար նյութեր» արտադրված այդ նյութերից 1.BCMO (բիսպրոմեթիլօքսետան) (CAS 142173-26-0) (տես նաև ՌՆ 8.e.1. և e.2. կետերը), 2.Դինիտրոազետիդին-տ-բուտիլ աղ (CAS 125735-38-8) (տես նաև ՌՆ 8. a.28. կետը), 3.HBIW (հեքսաբենզիլհեքսաազախվուրտցիտան) (CAS 124782-15-6) (տես նաև ML8. a.4.կետը), 4.TAIW (տետրաացետիլիդիբենզիլհեքսաազախվուրտցիտան) (տես նաև ՌՆ 8.</p>
--	---	--

<p>28080000 262019000 381519100 810600 8108</p>	<p>b.Keto-RDX (K-6 կամ 2,4,6-տրինիտրո-2,4,6-տրիպագիկլոհեքսանոն) (CAS 115029-35-1), 22.TAGN (տրիամինոգվանիդինետրատ) (CAS 4000-16-2), 23.TATB (տրիամինոտրինիտրոբենզոլ) (CAS 3058-38-6) (տես նաև ՌՆ 8, g.7 կետը դրա «նախանյութերի» համար), 24.TEDDZ (3,3,7,7-տետրաբիս (դիֆլուորամին) օկտահիդրո 1,5-դինիտրո-1,5-դիպագիկն), 25.Տետրագոլներ, ինչպես նշված է ստորև : a.NTAT (նիտրոտրիպոլ ամինոտետրագոլ), b.NTNT (1-N-(2-նիտրոտրիպոլ)-4-նիտրոտետրագոլ), 26.Tetryl (տրինիտրոֆենիլմեթիլնիտրամին) (CAS 479-45-8), 27.TNAD (1,4,5,8-տետրանիտրո-1,4,5,8-տետրապագոլեկալին) (CAS 135877-16-6) (տես նաև ՌՆ 8, g.6. կետը դրա «նախանյութերի համար»), 28.TNAZ (1,3,3-տրինիտրոպագոլեկոլին) (CAS 97645-24-4 97645-24-4) (տես նաև ՌՆ 8, g.2. կետը դրա «նախանյութերի» համար), 29.TNGU (SORGUYL կամ տետրանիտրոգլիկոլուրիլ) (CAS 55510-03-7), 30.TNP (1,4,5,8-տետրանիտրո-պիրիդազինոլ[4,5-d]պիրիդազին) (CAS 229176-04-9), 31.Տրիպոլներ, ինչպես նշված է ստորև : a.DNAM (2-օքսի-4,6-դինիտրոամինո-էս-տրիպոլ) (CAS 19899-80-0), b.NNHT (2-նիտրոմինո-5-նիտրո-հեքսահիդրո-1,3,5-տրիպոլ) (CAS 130400-13-4), 32.Տրիպոլներ, ինչպես նշված է ստորև : a.5-ազիդո-2-նիտրոտրիպոլ, b.ADHDTN (4-ամինո-3,5-դիհիդրոպոլ-1,2,4-տրիպոլ դինիտրոամինո) (CAS 1614-08-0), c.ADNT (1-ամինո-3,5-դինիտրո-1,2,4-տրիպոլ), d.BDNTA (բիս-դինիտրոտրիպոլամին), e.DBT (3,3,8-դինիտրո-5,5-bi-1,2,4-տրիպոլ) (CAS 30003-46-4), f.DNBT (դինիտրոբիստրիպոլ) (CAS 70890-46-9), g.NTDNA (2-նիտրոտրիպոլ 5-դինիտրոամինո) (CAS 75393-84-9), h.NTDNT (1-N-(2-նիտրոտրիպոլ) 3,5-դինիտրոտրիպոլ), i.PDNT (1-պիրիլ-3,5-դինիտրոտրիպոլ), j.TACOT (տետրանիտրոբենզոտրիպոլոբենզոտրիպոլ) (CAS 25243-36-1 25243-36-1) , ՌՆ 8. a.33. Այն պայթուցիկները, որոնք այլուր նշված չեն ՌՆ 8. a. կետում, ունեն 8700 մ/վ-ից ավելի մեծ դետոնացման արագություն առավելագույն խտության դեպքում, կամ դետոնացման ճնշում, որն ավելի բարձր է քան 34 GPa (34000 ՄՊա), 34.Օրգանական պայթուցիկներ, որոնք այլուր նշված չեն ՌՆ 8. a. կետում, որոնց դետոնացման ճնշումը հավասար է 25 GPa (25000 ՄՊա) կամ ավելի, որոնք կայուն կմնան 523 Կ (250oC) կամ ավելի բարձր ջերմաստիճանի դեպքում, 5 րոպե կամ ավելի երկար: ՌՆ 8. b. «Հրթիռային վառելիքներ», ինչպես նշված է ստորև : 1.ՄԱԿ-ի (UN) ցանկացած կարգի 1.1 կարծր «հրթիռային վառելիքներ», որոնք ունեն տեսականորեն հատուկ իմպուլս (ստանդարտ պայմաններում) ավելի քան 250 վայրկյան տևողությամբ ոչ-մետաղացված, կամ ավելի քան 270 վայրկյան տևողությամբ ալումինացված միացությունների համար: 2.ՄԱԿ-ի (UN) ցանկացած կարգի 1.3 կարծր «հրթիռային վառելիքներ», որոնք ունեն</p>	<p>a.4. կետը), 5.TAT (1,3,5,7 տետրապագոլիլ-1,3,5,7-տետրապագոլիլոկտան) (CAS 41378-98-7) (տես նաև ՌՆ 8. a.13. կետը), 6.1,4,5,8-տետրապագոլեկալին (CAS 5409-42-7) (տես նաև ՌՆ 8. a.27. կետը), 7.1,3,5-տրիպլորոբենզոլ (CAS 108-70-3) (տես նաև ՌՆ 8. a.23. կետը), 8.1,2,4-տրիհիդրոքսիբուտան (1,2,4-բուտանետրիոլ) (CAS 3068-00-6) (տես նաև ՌՆ 8.e.5. կետը): <u>Նկարագիր 5</u> <i>Լիցքերի և սարքերի համար տես ՌՆ 4 կետը:</i> <u>Նկարագիր 6</u> ՌՆ 8. կետը չի վերաբերում հետևյալ նյութերին, եթե միայն դրանք չեն կազմված կամ խառնված «էներգետիկ նյութերի» հետ, որոնք հասկանալի են ՌՆ 8. a. կետում կամ փոշի մետաղներից, որոնք հասկանալի են ՌՆ 8. c. կետում: a.Անոնիում պիրատ, b.Սն փոշի, c.Հեքսանիտրոդիֆենիլամին, d.Դիֆլուորոամին, e.Նիտրոկրախմալ f.Գալիումի նիտրատ, g.Տետրանիտրոնաֆթալին, h.Տրինիտրոանիդոլ, i.Տրինիտրոնաֆթալին, j.Տրինիտրոքսիլեն, k.N-պիրոդիլինոն, 1-մեթիլ-2-պիրոլիդինոն, l.Դիոկտիլմալեթաթ, m.Էթիլհեքսիլակրիլատ, n.Տրիէթիլայումինիում (TEA), տրիմեթիլայումինիում (TMA), և այլ պիրոֆորիկ մետաղային աղիներ և լիթիումի, կալիումի, մագնեզիումի, զինկի կամ բորի արիլներ, o.Նիտրոցելյուլոզ. p.Նիտրոգլիցերին (կամ գլիցերոլտրինիտրատ, տրինիտրոգլիցերին) (NG), q.2,4,6-տրինիտրոտոլուեն (TNT), r.Էթիլենդիամինեդիսիտոատ (EDDN), s.Պենտաէրիթրիտոլտետրանիտրատ (PETN), t.Արճիճի ազոլ, նորմալ և հիմքային արճիճի ստիֆնատ, և առաջնային պայթուցիկներ կամ առաջնային բաղադրիչներ, որոնք պարունակում են ազոլներ կամ ազոլային համալիրներ, u.Տրիէթիլենդիկոլոլիտրատ (TEGDN), v.2,4,6-տրինիտրոտոլուեն (ստիֆնիլ թթու), w.Դիէթիլդիֆենիլ միզանյութ, դիմեթիլդիֆենիլ միզանյութ, մեթիլէթիլդիֆենիլ միզանյութ [Յենտրալիտներ], x.N,N-դիֆենիլ միզանյութ (ոչ սիմետրիկ դիֆենիլ միզանյութ), y.Մեթիլ-N,N-դիֆենիլ միզանյութ (մեթիլ ոչ սիմետրիկ դիֆենիլ միզանյութ), z.Էթիլ-N,N-դիպենիլ միզանյութ (էթիլ ոչ սիմետրիկ դիֆենիլ միզանյութ), a a.2-Նիտրոդիֆենիլամին (2-NDPA), b b.4-Նիտրոդիֆենիլամին (4-NDPA), c c.2,2-դինիտրոպրոպանոլ, dd.Նիտրոգվանիդին (տես 1. c.11.d. կետը Երկակի օգտագործման ցանկի մասին). Հատուկ նկարագիր Հասկացվում է ,որ հատուկ մշակված դեղագործական արտադրանքները,</p>
---	--	--

	<p>տեսականորեն հատուկ իմպուլս (ստանդրատ պայմաններում) ավելի քան 230 վայրկյան տևողությամբ ոչ հալոգենացված, 250 վայրկյան տևողությամբ ոչ մետաղացված, և 266 վայրկյան տևողությամբ մետաղացված միացությունների համար:</p> <p>3.«Հրթիռային վառելիքներ», որոնք ավելի քան 1,200 կՁ/կգ կոնստանտ ուժ ունեն:</p> <p>4.«Հրթիռային վառելիքներ», որոնք կարող են պահպանել կայուն գծային այրման արագություն ավելի քան 38 մ/վ տևողությամբ ստանդարտ պայմաններում (չափված ինչիբացված մեկ շարքով) 6,89 ՄՊա ճնշում և 294Կ (210C), 5.Elastomer Modified Cast Double Base (EMCDB) տեսակի «հրթիռային վառելիքներ» առավելագույն ճնշման դեպքում ավելի քան 5% երկարող, 233Կ (-400C) դեպքում: 6.Ցանկացած «հրթիռային վառելիք», որը պարունակում է այն նյութերը, որոնք հատկանշված են ML8. a. կետում: ՌՆ8. c.«Պիրոտեխնիկական» նյութեր, վառելիքներ և հարակից նյութեր, ինչպես նշված է ստորև, և դրանց խառնուրդները.</p> <p>1.Ինքնաթիռային վառելիքներ հատուկ ստեղծված ռազմական նպատակների համար,</p> <p>2.Ալեյն (այլումինի հիդրիդ) (CAS 7784-21-6),</p> <p>3.Կարբորաններ, դեկարբորան (CAS 17702-41-9), պենտաբորաններ (CAS 19624-22-7 և 18433-84-6) և նրանց ածանցյալները,</p> <p>4.Հիդրազին և ածանցյալները, ինչպես նշված է ստորև (տես նաև ՌՆ8.d.8. և d.9. կետերը օքսիդացնող հիդրազինի ածանցյալների համար):</p> <p>a.Հիդրազին (CAS 302-01-2) 70% կամ ավելի խտությամբ,</p> <p>b.Մոնոմեթիլ հիդրազին (CAS 60-34-4),</p> <p>c.Միմետրիկ դիմեթիլ հիդրազին (CAS 540-73-8), d.Ոչ սիմետրիկ դիմեթիլ հիդրազին (CAS 57-14-7),</p> <p>5.Մետաղական վառելիքներ մասնիկային ձևում կամ սֆերիկ, կամ առումացված կամ սֆերիդալ, փաթիլավոր կամ մանրահատիկ, արտադրված այնպիսի նյութերից, որոնք 99 %-ով կամ ավելի կազմված են հետևյալ որևէ մեկ նյութից.</p> <p>a.Մետաղներ, ինչպես նշված է ստորև և դրանց խառնուրդները. 1.Բերիլիում (CAS 7440-41-7) մասնիկային չափերով 60 միկրո մ կամ ավելի պակաս չափերով: 2.Երկաթի փոշի (CAS 7439-89-6) 3 միկրո մ կամ ավելի պակաս չափերով` արտադրված ջրածնով երկաթի օքսիդի ռեդուկցիայի միջոցով: ՌՆ8. c.5.</p> <p>b.Խառնուրդներ, որոնք պարունակում են հետևյալ նյութերից որևէ մեկը: 1.Ցիրկոնիում (CAS 7440-67-7), մագնեզիում (CAS 7439-95-4) կամ դրանց համաձուլվածքները 60 միկրո մ կամ ավելի պակաս մասնիկային չափերով կամ</p> <p>2.Բորային (CAS 7440-42-8) կամ բորի կարբիդային (CAS 12069-32-8) վառելիքներ 85% կամ ավելի բարձր մաքրության և 60 միկրո մ կամ ավելի պակաս մասնիկային չափերով: 6.Ռազմական նյութեր, որոնք պարունակում են խտացնող նյութեր հիդրոկարբոնային վառելիքների համար, հատուկ կազմված հրացիրների կամ հրկիզող զինամթերքի համար, ինչպես օրինակ մետաղային ստեարատները կամ պակմատները (օրինակ. օկտալ (CAS 637-12-7)) և M1, M2, և M3 խտացուցիչներ, 7.Պերքլորատներ, քլորատներ և քրոմատներ, կազմված փոշիացված մետաղով կամ այլ բարձր էներգատար վառելիքային բաղադրիչներով, 8.Ալյումինի սֆերիկ փոշի (CAS 7429-</p>	<p>որոնք պարունակում են ՄԼ8 տեսակի նյութերը, հսկողության ենթակա չեն:</p>
--	---	--

ՌՆ 21.		<p>«Օրագրային ապահովում», ինչպես նշված է ստորև.</p> <p>a. «Օրագրային ապահովում», որը հատուկ նախագծված կամ փոփոխված է այնպիսի սարքավորում, նյութեր կամ «ծրագրային ապահովում» «մշակելու», «արտադրելու» կամ «օգտագործելու» համար, որոնք հատկանշված են Ռազմական ապրանքների ցանկում:</p> <p>b. Յուրահատուկ «ծրագրային ապահովում», բացի նրանցից, որոնք հատկանշված են ՌՆ 21.a. կետում, ինչպես նշված է ստորև.</p> <p>1. «Օրագրային ապահովում», որը հատուկ նախագծված է ռազմական նպատակների համար և որը հատուկ նախագծված է ռազմական գեներերի համակարգերը մոդելավորելու, նմանակելու կամ գնահատելու համար:</p> <p>2. «Օրագրային ապահովում», որը հատուկ նախագծված է ռազմական նպատակների համար, և հատուկ նախագծված է ռազմական իրական սցենարներ մոդելավորելու կամ նմանակելու նպատակով:</p> <p>3. «Օրագրային ապահովում» ավանդական, միջուկային, քիմիական կամ կենսաբանական գեներերի ազդեցությունը գնահատելու համար:</p> <p>4. «Օրագրային ապահովում», որը հատուկ նախատեսված է ռազմական նպատակների համար և հատուկ նախագծված է հրամանատարական հաղորդակցման, վերահսկման և հետախուզության կամ հրամանատարության, հաղորդակցման, վերահսկման, համակարգիչների և հետախուզական նպատակներով:</p> <p>d. «Օրագրային ապահովում», որոնք հատկանշված</p>	

		<p>չեն ՌՆ 21. a., կամ b. կետերում, հատուկ նախագծված են կամ փոփոխված աշխատեցնելու այն սարքավորումները, որոնք հատկանշված չեն Ռազմական ապրանքների ցանկում այն ռազմական ֆունկցիաները կատարող սարքավորումների համար, որոնք հատկանշված են Ռազմական ապրանքների ցանկում:</p>	
ՌՆ 22.		<p>«Տեխնոլոգիա», ինչպես նշված է ստորև. a. ՌՆ 22. b կետում չհատկանշված «Տեխնոլոգիա», որը «պահանջվում է» այն պարագաների «մշակման», «արտադրության» կամ «օգտագործման» համար, որոնք հատկանշված են Ռազմական ապրանքների ցանկում: b. «Տեխնոլոգիա», ինչպես նշված է ստորև. 1. «Տեխնոլոգիա», որը «պահանջվում է» բաղադրամասերի հավաքման սխեմաները մշակելու, և այն արտադրանքի վերջնական հավաքված տեղադրումների գործողության, վերանորոգման և շահագործման համար, որոնք հատկանշված են Ռազմական ապրանքների ցանկում, եթե նույնիսկ նման տեղադրումների բաղադրամասերը հատկանշված չեն: 2. «Տեխնոլոգիա», որը «պահանջվում է» փոքր զենքերի «մշակման» և «արտադրության» համար, եթե նույնիսկ դա ենթադրում է վերարտադրել հնաձգ փոքր զենքեր: 3. «Տեխնոլոգիա», որը «պահանջվում է» տոբսիկոլոգիական ազենաների, հարակից սարքավորման կամ բաղադրամասերի «մշակման», «արտադրության» կամ «օգտագործման» համար, որոնք հատկանշված են ՌՆ 7. a.-ից ՌՆ 7.g. կետերում: 4. «Տեխնոլոգիա», որը «պահանջվում է» «կենսապոլիմերների» կամ դրանց հատկորոշ բջիջների տեսակների «մշակման», «արտադրության» կամ «օգտագործման» համար, որոնք հատկանշված են ՌՆ 7.h. կետում, 5. «Տեխնոլոգիա», որը «պահանջվում է» բացառապես ռազմական փոխադրական հիմնանյութերի կամ ռազմական նյութերի մեջ «բիոկատալիստներ» տեղադրելու համար, որոնք հատկանշված են ՌՆ 7.i.1. կետում:</p>	<p><i>Նկարագիր 1 «Տեխնոլոգիան», որը «պահանջվում է» պարագաների «մշակման», «արտադրության» կամ «օգտագործման» համար», որոնք հատկանշված են Ռազմական ապրանքների ցանկում մնում է վերահսկողության տակ նույնիսկ եթե կիրառելի է ցանկացած ուրիշ պարագայի նկատմամբ, որը հատկանշված չէ Ռազմական ապրանքների ցանկում:</i> <i>Նկարագիր 2 ՌՆ 22 չի վերաբերում.</i> a. Այն «տեխնոլոգիային», որը նվազագույն անհրաժեշտ է այն պարագաների տեղադրման, գործարկման և շահագործման (ստուգման) ու վերանորոգման համար, որոնք չեն վերահսկվում կամ որոնց արտահանումը լիազորված է եղել: b. Այն «տեխնոլոգիային», որը «մասշտեբի է հանրային օգտագործման համար», «հիմնական գիտական ձեռքբերումներին» կամ պատենտային կիրառումների համար նվազագույն անհրաժեշտ տեղեկությոին: c. Այն «տեխնոլոգիային», որը վերաբերում է քաղաքացիական փոխադրող սարքերի շարունակական ներքին այրման համար անհրաժեշտ մագնիսական ինդուկցիային:</p>

Կ Ա Ր Գ

ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՊՐԱՆՔԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետությունում ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման և արտահանման լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:
2. Ռազմական նշանակության արտադրանքի ներմուծում և արտահանում իրականացնելու իրավունք ունեն միայն սույն կարգի համաձայն լիցենզիա ստացած իրավաբանական և ֆիզիկական անձինք ու անհատ ձեռնարկատերերը:
3. Հայաստանի Հանրապետությունում ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման և արտահանման լիցենզավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ սույն կարգին համապատասխան:
4. Հայաստանի Հանրապետությունում ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման և արտահանման լիցենզիա կամ դրա կրկնօրինակը տալու, լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու, լիցենզիան վերաձևակերպելու, լիցենզիաների գրանցամատյանից այլ անձանց տեղեկություններ տրամադրելու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:
5. Լիցենզավորված անձի ստուգումները կատարվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

II. ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՊՐԱՆՔԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՑԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

6. Հայտատուն ռազմական նշանակության արտադրանքի ներմուծում և արտահանում իրականացնելու լիցենզիա ստանալու համար լիցենզավորող մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
 - 1) լիցենզիա ստանալու մասին հայտ, նշելով՝
 - ա. իրավաբանական անձի համար՝ իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը,
 - բ. անհատ ձեռնարկատիրոջ համար՝ անունը, ազգանունը, բնակության և գործունեության իրականացման վայրերը,
 - գ. «Ռազմական նշանակության արտադրանքի ներմուծում և արտահանում» բառերը՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ, որը հայտատուն մտադիր է իրականացնել,
 - դ. հայտատուի հարկ վճարողի հաշվառման համարը,
 - 2) ռազմական նշանակության արտադրանքի պահպանման համար անհրաժեշտ պահեստային տարածքների սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի պատճեն և հայտատուի կողմից հաստատված հայտարարություն այն մասին, որ ներկայացված պահեստային տարածքը համապատասխանում է սույն կարգի 7-րդ կետի 1-5-րդ ենթակետերով նախատեսված պահանջներին, ինչպես նաև ապահովում է ռազմական նշանակության արտադրանքի յուրաքանչյուր տեսակի պահպանման համար նորմատիվ ակտերով նախատեսված պահանջները,
 - 3) սույն կարգի 7-րդ կետի 7-րդ ենթակետով սահմանված ներկազմակերպական ծրագիրը,
 - 4) պետական գրանցման վկայականի (բոլոր ներդիրներով) և կանոնադրության պատճենները (անհատ

ձեռնարկատերերը՝ պետական գրանցման վկայականի պատճենը),

5) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիրը:

7. Ելնելով ռազմական նշանակության արտադրանքի պահպանության ապահովման, ինչպես նաև ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման և արտահանման հետ առնչվող աշխատողների կյանքի, առողջության, պետության և հասարակության շահերի պաշտպանության անհրաժեշտությունից՝ ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման և արտահանման լիցենզիա ստանալու համար իրավաբանական և ֆիզիկական անձինք ու անհատ ձեռնարկատերերը պարտավոր են ապահովել հետևյալ պայմանները և պահանջները՝

1) ունենալ պահեստային տարածքի արտաքին և ներքին ձայնագրող տեսահսկման սարքավորումներ, համապատասխան պահպանության անձնակազմով ու հակահրդեհային համակարգով ապահովված պահեստային շինություններ,

2) ռազմական նշանակության արտադրանքի պահեստների մուտքերը պետք է ունենան մետաղահսկիչ, ինչպես նաև փակ տարաներով տեղափոխվող առարկաների զննման ռենտգենային հսկման սարքավորումներ,

3) պահեստային շինությունների բոլոր մուտքերի դռները, ինչպես նաև պահեստային տարածք մտնող դարպասները պետք է ունենան ձայնա-ազդանշանային սարքավորումներ և լինեն լուսավորված,

4) ռազմական նշանակության արտադրանքի պահեստների պատուհանները պետք է ծածկված լինեն մետաղյա ցանցով, իսկ տարածքից դուրս նայող պատուհանները՝ առնվազն 16 մմ տրամագծով երկաթյա ձողերից պատրաստված 150/150 մմ-ից ոչ մեծ վանդակաշարով,

5) ռազմական նշանակության արտադրանքի պահեստը պետք է ապահովված լինի ռազմական նշանակության արտադրանքի պահպանման համապատասխան նորմատիվներով նախատեսված ջերմաստիճանն ապահովող օդափոխման և ջերմաստիճանի կայունացման համակարգով,

6) ապահովել ռազմական նշանակության արտադրանքի յուրաքանչյուր տեսակի պահպանման համար նորմատիվ ակտերով նախատեսված պահանջները,

7) ունենալ ռազմական նշանակության արտադրանքի ներմուծում և արտահանում իրականացնելու ներկայումս կերպական ծրագիր:

Ներկայումս կերպական ծրագիրը ներառում է.

ա. անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ (ռազմական արտադրանքի ցանկին վերաբերող) և կարողություններ ունեցող աշխատակիցներ ունենալը.

բ. ռազմական նշանակության արտադրանքին (դրանց տեխնոլոգիաներին) առնչվող բոլոր փաստաթղթերի և էլեկտրոնային կրիչների պահպանման, պաշտպանության և հսկման անհրաժեշտ չափանիշները բավարարելը, ներառյալ փաստաթղթերի, ինչպես նաև դրանց էլեկտրոնային կրիչներ չարտոնված մուտքն արգելող տեխնիկական պայմանները բավարարելը:

8. Լիցենզիա ստանալուց հետո, սույն կարգի 7-րդ կետում նշված պայմանների փոփոխության դեպքում, լիցենզավորված անձը պարտավոր է ոչ ուշ, քան 10-օրյա ժամկետում ծանուցել դրա մասին լիցենզավորող մարմնին:

9. Լիցենզիան տրամադրում է լիցենզավորող մարմինը՝ 3 տարի ժամկետով:

10. Լիցենզիան չի կարող օգտագործման տրվել այլ անձանց, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

11. Լիցենզավորման գործընթացն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

12. Լիցենզավորող մարմինը իրավունք ունի ստուգել հայտատուի կողմից հայտին կից ներկայացված տեղեկությունների համապատասխանությունը սույն կարգի 7-րդ կետում նշված պահանջներին:

13. Նախքան լիցենզիան տրամադրելը լիցենզավորող մարմինը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայությունը ստուգելու նպատակով, համապատասխան հարցում է ուղարկում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, ինչպես նաև

անհրաժեշտության դեպքում՝ շահագրգիռ այլ պետական մարմինների:

14. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածում նշված հիմքերի բացակայության վերաբերյալ ստացված կարծիքների հիման վրա, լիցենզավորող մարմինը հայտատուին լիցենզիան տրամադրում է սույն կարգի 6-րդ կետում նշված բոլոր փաստաթղթերը լիցենզավորող մարմին մուտքագրվելու օրվանից ոչ ուշ, քան 30-օրյա ժամկետում: Լիցենզավորող մարմինը լիցենզիան հանձնելիս ծանուցում է նաև լիցենզավորված անձին միջազգային անվտանգության ապահովման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների մասին: Այդ պարտավորությունների փոփոխության վերաբերյալ լիցենզավորված անձը տեղեկացվում է օրենքով սահմանված կարգով:

15. Լիցենզավորման հայտը մերժվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

IV. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

16. Լիցենզավորված անձը ռազմական նշանակության արտադրանքի ներմուծում և (կամ) արտահանում իրականացնելու համար, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նպատակներին իր գործունեության համապատասխանությունն ապահովելու նպատակով, պարտավոր է արտադրանքի ներմուծման և (կամ) արտահանման նախատեսված ժամկետից առնվազն 15 աշխատանքային օր առաջ գրավոր դիմել լիցենզավորող մարմնին՝ ներմուծման և (կամ) արտահանման համապատասխանության մասին եզրակացություն ստանալու համար: Լիցենզավորված անձը ռազմական նշանակության արտադրանքի արտահանում իրականացնելու համար դիմումին կցում է նաև ռազմական նշանակության արտադրանքի ցանկը և ռազմական նշանակության արտադրանքի վերջնական օգտագործողի ու վերջնական օգտագործման հավաստագիրը:

Լիցենզավորված անձը ռազմական նշանակության արտադրանքի ներմուծում իրականացնելու համար դիմումին կից ներկայացնում է նաև տեղեկություններ այն անձի անվանման, գտնվելու (հաշվառման) և գործունեության վայրի մասին, որից ձեռք է բերվել ռազմական նշանակության արտադրանքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում այդ արտադրանքի վերջնական օգտագործողի նույնաբովանդակ և վերջնական օգտագործման նպատակի մասին տվյալներ: Արտահանող երկրի պահանջով լիցենզավորող մարմինը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այն պետական կառավարման մարմինը, որի համակարգման ոլորտում է կոնկրետ ռազմական նշանակության արտադրանքի վերջնական օգտագործումը, հաստատում է սույն մասում նշված բոլոր տեղեկությունները, ինչպես նաև հավաստում է, որ ռազմական նշանակության արտադրանքը չի փոխանցվի որևէ երրորդ երկիր կամ որևէ այլ կողմի, ինչպես նաև չի օգտագործվի հայտարարված վերջնական օգտագործման նպատակից բացի որևէ այլ նպատակով՝ առանց արտահանող երկրի լիազոր մարմնի գրավոր և պատշաճ կերպով վավերացված համաձայնության:

17. Լիցենզավորող մարմինը, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում շահագրգիռ այլ պետական մարմինների կարծիքների հիման վրա կազմում է եզրակացություն, որը սույն կարգի 16-րդ կետին համապատասխան բոլոր փաստաթղթերը լիցենզավորող մարմին մուտք լինելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է դիմում ներկայացրած լիցենզավորված անձին:

18. Լիցենզավորված անձն իրավունք ունի ռազմական նշանակության արտադրանքի ներմուծում և (կամ) արտահանումն իրականացնել միայն լիցենզավորող մարմնի դրական եզրակացության դեպքում:

19. Ռազմական նշանակության արտադրանքի ներմուծում և (կամ) արտահանում իրականացնելիս լիցենզավորված անձը պարտավոր է պայմանագրով նախատեսված ժամանակացույցով ապրանքների յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումից հետո ոչ ուշ, քան 10-օրյա ժամկետում լիցենզավորող մարմնին հաշվետվություններ ներկայացնել այդ խմբաքանակի մատակարարման (համաձայն սույն որոշման հավելված 7-ի Ձև 1), ինչպես նաև յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո ոչ ուշ, քան 20-օրյա ժամկետում՝ ներմուծված ռազմական նշանակության արտադրանքի վերջնական օգտագործման (համաձայն սույն որոշման հավելված 7-ի Ձև

4) մասին:

20. Սույն կարգի 19-րդ կետում նշված հաշվետվությունների պատճենները լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն:

Կ Ա Ր Գ

ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքով ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:
2. Ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրում իրականացնելու իրավունք ունեն միայն սույն կարգի համաձայն լիցենզիա ստացած իրավաբանական և ֆիզիկական անձինք ու անհատ ձեռնարկատերերը:
3. Հայաստանի Հանրապետությունում ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման լիցենզավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ սույն կարգին համապատասխան:
4. Հայաստանի Հանրապետությունում ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման լիցենզիա կամ դրա կրկնօրինակը տալու, լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու, լիցենզիան վերաձևակերպելու, լիցենզիաների գրանցամատյանից այլ անձանց տեղեկություններ տրամադրելու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:
5. Լիցենզավորված անձի ստուգումները կատարվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

II. ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՄԺԵՇ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԸՆԴՀԱՆՁՆԵՐԸ

6. Հայտատուն ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրում իրականացնելու լիցենզիա ստանալու համար լիցենզավորող մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
 - 1) լիցենզիա ստանալու մասին հայտ, նշելով՝
 - ա. իրավաբանական անձի համար՝ իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը,
 - բ. անհատ ձեռնարկատիրոջ համար՝ անունը, ազգանունը, բնակության և գործունեության իրականացման վայրերը,
 - գ. «Ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրում» բառերը՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ, որը հայտատուն մտադիր է իրականացնել,
 - դ. հայտատուի հարկ վճարողի հաշվառման համարը,
 - 2) ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցների սեփականության վկայականները, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերը (պայմանագիր) և հայտատուի կողմից հաստատված հայտարարություն այն մասին, որ ներկայացված տրանսպորտային միջոցները համապատասխանում են սույն կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջներին,
 - 3) սույն կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ներկազմակերպական ծրագիրը,
 - 4) պետական գրանցման վկայականի (բոլոր ներդիրներով) և կանոնադրության պատճենները, (անհատ ձեռնարկատերերը՝ պետական գրանցման վկայականի պատճենը),
 - 5) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով պետական

տուրքի վճարման անդորրագիրը:

7. Ելնելով ռազմական նշանակության արտադրանքի պահպանության ապահովման, ինչպես նաև ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման հետ առնչվող աշխատողների կյանքի, առողջության, պետության և հասարակության շահերի պաշտպանության անհրաժեշտությունից՝ ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման լիցենզիա ստանալու համար իրավաբանական և ֆիզիկական անձինք ու անհատ ձեռնարկատերերը պարտավոր են ապահովել հետևյալ պայմանները և պահանջները՝

1) պահպանել ռազմական նշանակության արտադրանքի յուրաքանչյուր տեսակի անվտանգ տեղափոխմանը նորմատիվ-իրավական ակտերով ներկայացվող պահանջները,

2) ունենալ ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրում իրականացնելու ներկազմակերպական ծրագիր:

Ներկազմակերպական ծրագիրը ներառում է.

ա. անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ (ռազմական արտադրանքի ցանկին վերաբերող) և կարողություններ ունեցող աշխատակիցներ ունենալը.

բ. ռազմական նշանակության արտադրանքին (դրանց տեխնոլոգիաներին) առնչվող բոլոր փաստաթղթերի և էլեկտրոնային կրիչների պահպանման, պաշտպանության և հսկման անհրաժեշտ չափանիշները բավարարելը, ներառյալ փաստաթղթերի, ինչպես նաև դրանց էլեկտրոնային կրիչներ չարտոնված մուտքն արգելող տեխնիկական պայմանները բավարարելը:

8. Լիցենզիա ստանալուց հետո, սույն կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ներկազմակերպական ծրագրի փոփոխության դեպքում, լիցենզավորված անձը պարտավոր է ոչ ուշ, քան 10-օրյա ժամկետում ծանուցել դրա մասին լիցենզավորող մարմնին:

9. Լիցենզիան տրամադրում է լիցենզավորող մարմինը՝ 3 տարի ժամկետով:

10. Լիցենզիան չի կարող օգտագործման տրվել այլ անձանց, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

11. Լիցենզավորման գործընթացն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

12. Լիցենզավորող մարմինն իրավունք ունի ստուգել հայտատուի կողմից հայտին կից ներկայացված տեղեկությունների համապատասխանությունը սույն կարգի 7-րդ կետում նշված պահանջներին:

13. Նախքան լիցենզիան տրամադրելը լիցենզավորող մարմինը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայությունը ստուգելու նպատակով, համապատասխան հարցում է ուղարկում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում շահագրգիռ այլ պետական մարմինների:

14. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածում նշված հիմքերի բացակայության վերաբերյալ ստացված կարծիքների հիման վրա, լիցենզավորող մարմինը հայտատուին լիցենզիան տրամադրում է սույն կարգի 6-րդ կետում նշված բոլոր փաստաթղթերը լիցենզավորող մարմին մուտքագրվելու օրվանից ոչ ուշ, քան 30-օրյա ժամկետում: Լիցենզավորող մարմինը լիցենզիան հանձնելիս ծանուցում է նաև լիցենզավորված անձին միջազգային անվտանգության ապահովման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների մասին: Այդ պարտավորությունների փոփոխության վերաբերյալ լիցենզավորված անձը տեղեկացվում է օրենքով սահմանված կարգով:

15. Լիցենզավորման հայտը մերժվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

IV. ԼԻՑԵՆԶԻԱ ՄՏԱՑԱԾ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՄՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

16. Լիցենզավորված անձը ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրում իրականացնելու համար, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նպատակներին իր գործունեության համապատասխանությունն ապահովելու նպատակով, պարտավոր է տարանցիկ փոխադրման նախատեսված ժամկետից առնվազն 15 աշխատանքային օր առաջ գրավոր դիմել լիցենզավորող մարմնին՝ համապատասխանության մասին եզրակացություն ստանալու համար: Դիմումին կցվում է նաև ռազմական նշանակության արտադրանքի ցանկը և ռազմական նշանակության արտադրանքի վերջնական օգտագործողի ու վերջնական օգտագործման հավաստագիրը:

17. Լիցենզավորող մարմինը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում շահագրգիռ այլ պետական մարմինների կարծիքների հիման վրա կազմում է եզրակացություն, որը սույն կարգի 16-րդ կետին համապատասխան բոլոր փաստաթղթերը լիցենզավորող մարմին մուտք լինելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է դիմում ներկայացրած լիցենզավորված անձին:

18. Լիցենզավորված անձն իրավունք ունի ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրում իրականացնել միայն լիցենզավորող մարմնի դրական եզրակացության դեպքում:

19. Ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման դեպքում լիցենզավորված անձը պարտավոր է տարանցիկ փոխադրումն ավարտելուց հետո ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում, լիցենզավորված անձին հաշվետվություն ներկայացնել տարանցիկ փոխադրման կատարման (համաձայն սույն որոշման հավելված 7-ի Ձև 2) մասին:

20. Սույն կարգի 19-րդ կետում նշված հաշվետվության պատճենները լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն:

Կ Ա Ր Գ

**ՈԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՌԵՎՏՐԻ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:

2. Ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեություն իրականացնելու իրավունք ունեն միայն սույն կարգի համաձայն լիցենզիա ստացած իրավաբանական և ֆիզիկական անձինք ու անհատ ձեռնարկատերերը:

3. Հայաստանի Հանրապետությունում ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության լիցենզավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը՝ սույն կարգին համապատասխան:

4. Հայաստանի Հանրապետությունում ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության լիցենզիա կամ դրա կրկնօրինակը տալու, լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգելու, լիցենզիան վերաձևակերպելու, լիցենզիաների գրանցամատյանից այլ անձանց տեղեկություններ տրամադրելու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

5. Լիցենզավորված անձի ստուգումները կատարվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

**II. ՈԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՌԵՎՏՐԻ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆԸ ՆԵՐԿՍՅԱՑՎՈՂ
ՊԱՑՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

6. Հայտատուն ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու համար լիցենզավորող մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) լիցենզիա ստանալու մասին հայտ, նշելով՝

ա. իրավաբանական անձի համար՝ իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը,

բ. անհատ ձեռնարկատիրոջ համար՝ անունը, ազգանունը, բնակության և գործունեության իրականացման վայրերը,

գ. «Ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեություն» բառերը՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ, որը հայտատուն մտադիր է իրականացնել,

դ. հայտատուի հարկ վճարողի հաշվառման համարը,

3) սույն կարգի 7-րդ կետով սահմանված ներկազմակերպական ծրագիրը,

4) պետական գրանցման վկայականի (բոլոր ներդիրներով) և կանոնադրության պատճենները, (անհատ ձեռնարկատերերը՝ պետական գրանցման վկայականի պատճենը),

5) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիրը:

7. Ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության լիցենզավորված անձինք պարտավոր են ունենալ ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեություն

իրականացնելու ներկազմակերպական ծրագիր:

Ներկազմակերպական ծրագիրը ներառում է.

ա. անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ (ռազմական արտադրանքի ցանկին վերաբերող) և կարողություններ ունեցող աշխատակիցներ ունենալը.

բ. ռազմական նշանակության արտադրանքին (դրանց տեխնոլոգիաներին) առնչվող բոլոր փաստաթղթերի և էլեկտրոնային կրիչների պահպանման, պաշտպանության և հսկման անհրաժեշտ չափանիշները բավարարելը, ներառյալ փաստաթղթերի, ինչպես նաև դրանց էլեկտրոնային կրիչներ չարտոնված մուտքն արգելող տեխնիկական պայմանները բավարարելը:

8. Լիցենզիա ստանալուց հետո, սույն կարգի 7-րդ կետում նշված ներկազմակերպական ծրագրի փոփոխության դեպքում, լիցենզավորված անձը պարտավոր է ոչ ուշ, քան 10-օրյա ժամկետում ծանուցել դրա մասին լիցենզավորող մարմին:

9. Լիցենզիան տրամադրում է լիցենզավորող մարմինը՝ 3 տարի ժամկետով:

10. Լիցենզիան չի կարող օգտագործման տրվել այլ անձանց, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

11. Լիցենզավորման գործընթացն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

12. Լիցենզավորող մարմինն իրավունք ունի ստուգել հայտատուի կողմից հայտին կից ներկայացված սույն կարգի 7-րդ կետով սահմանված ներկազմակերպական ծրագրում ներառված տեղեկությունների հավաստիությունը:

13. Նախքան լիցենզիան տրամադրելը լիցենզավորող մարմինը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայությունը ստուգելու նպատակով, համապատասխան հարցում է ուղարկում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում շահագրգիռ այլ պետական մարմինների:

14. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածում նշված հիմքերի բացակայության վերաբերյալ ստացված կարծիքների հիման վրա, լիցենզավորող մարմինը հայտատուին լիցենզիան տրամադրում է սույն կարգի 6-րդ կետում նշված բոլոր փաստաթղթերը լիցենզավորող մարմին մուտքագրվելու օրվանից ոչ ուշ, քան 30-օրյա ժամկետում: Լիցենզավորող մարմինը լիցենզիան հանձնելիս ծանուցում է նաև լիցենզավորված անձին միջազգային անվտանգության ապահովման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների մասին: Այդ պարտավորությունների փոփոխության վերաբերյալ լիցենզավորված անձը տեղեկացվում է օրենքով սահմանված կարգով:

15. Լիցենզավորման հայտը մերժվում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

IV. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

16. Լիցենզավորված անձը ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեություն իրականացնելու համար, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված նպատակներին իր գործունեության համապատասխանությունն ապահովելու նպատակով, պարտավոր է մինչև ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության պայմանագիր կնքելը դիմել լիցենզավորող մարմին՝ համապատասխանության մասին եզրակացություն ստանալու համար: Դիմումի հետ միասին լիցենզավորված անձը պարտավոր է տեղեկություններ ներկայացնել ռազմական նշանակության արտադրանքի տեսակի, ռազմական նշանակության արտադրանք ներմուծող և(կամ) արտահանող անձի, ռազմական նշանակության արտադրանքի վերջնական օգտագործողի և վերջնական օգտագործման նպատակի մասին:

17. Լիցենզավորող մարմինը, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության,

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում շահագրգիռ այլ պետական մարմինների կարծիքների հիման վրա կազմում է եզրակացություն, որը սույն կարգի 16-րդ կետին համապատասխան բոլոր փաստաթղթերը լիցենզավորող մարմին մուտք լինելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է դիմում ներկայացրած լիցենզավորված անձին:

18. Լիցենզավորված անձը իրավունք ունի ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության պայմանագիր ստորագրել միայն լիցենզավորող մարմնի դրական եզրակացության դեպքում:

19. Ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության պայմանագիր ստորագրած լիցենզավորված անձը պարտավոր է ոչ ուշ, քան երեք ամիսը մեկ անգամ լիցենզավորող մարմնին հաշվետվություն ներկայացնել իր կողմից ստորագրված ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության պայմանագրերի (համաձայն սույն որոշման հավելված 7-ի Ձև 3) մասին:

20. Սույն կարգի 19-րդ կետում նշված հաշվետվության պատճենները լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն:

ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

ք. _____

« ____ » « _____ » 20__թ.

Արտահանող կազմակերպության տվյալները (<i>իրավաբանական հասցե, հեռախոսահամար, ֆաքս, տնօրեն</i>),	
Ներմուծող կազմակերպության տվյալները (<i>իրավաբանական հասցե, հեռախոսահամար, ֆաքս, տնօրեն</i>),	
Փոխադրող կազմակերպության տվյալները (<i>իրավաբանական հասցե, հեռախոսահամար, ֆաքս, տնօրեն</i>),	
Արտահանվող (<i>ներմուծվող</i>) ռազմական նշանակության արտադրանքի անվանումը, չափման միավորը, քանակը և Անկախ Պետությունների Համագործակցության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագիրը ԱՊՀ ԱՏԳ ԱԱ	
Ռազմական նշանակության արտադրանքի վերջնական օգտագործողի մասին տվյալները:	
_____ հայտարարում է, որ վերը նշված տվյալները ճիշտ են, վերը նշված ռազմական նշանակության արտադրանքը կհանձնվի վերը նշված վերջնական օգտագործողին և չի վերավաճառվի կամ որևէ այլ կերպ փոխանցվի որևէ այլ երրորդ պետություն և (կամ) որևէ այլ երրորդ կողմի՝ առանց արտահանող երկրի լիազոր մարմնի գրավոր և պատշաճ կերպով վավերացված դրական եզրակացության:	
Արտահանող _____ (ներմուծող) կազմակերպության ստորագրությունը և կնիքը:	_____
_____ հավաստում է, որ ներկայացված վերը նշված ներմուծվող ռազմական նշանակության արտադրանքը օգտագործվելու է _____ կողմից և չի փոխանցվի որևէ այլ երրորդ պետության և (կամ) որևէ երրորդ կողմի՝ առանց արտահանող երկրի լիազոր մարմնի գրավոր և պատշաճ ձևով վավերացված դրական եզրակացության:	
_____ հայտարարում է, որ վերը նշված ռազմական նշանակության արտադրանքը օգտագործվելու է բացառապես _____ նպատակով: <u>Ներմուծող պետությունը ճանաչում է, որ արտահանող երկրի լիազոր մարմինը իրեն իրավունք է վերապահում ստուգել մատակարարված արտադրանքի վերջնական օգտագործման նպատակը:</u>	
_____ հավաստում է, որ վերը նշված արտահանվող ռազմական նշանակության արտադրանքը չի օգտագործվի վերը նշված նպատակից բացի որևէ այլ նպատակով՝ առանց արտահանող երկրի լիազոր մարմնի գրավոր և պատշաճ ձևով վավերացված համաձայնության:	
Ներմուծող երկրի լիազոր մարմնի ստորագրությունը և կնիքը	

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2009 թվականի
նոյեմբերի 12-ի N 1308-Ն որոշման

Ձև

ՀՀ պաշտպանության նախարար, պրն _____

_____ (հայտատուի անվանումը (անունը, ազգանունը)

_____ (կազմակերպական-իրավական ձևը)

_____ (գտնվելու (բնակության և գործունեության վայրերը) վայրը, հասցեն)

_____ (հեռախոսահամարը)

Հ Ա Յ Տ

**ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՏԱՐԱՆՑԻԿ
ՓՈԽԱԴՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱ ԱՌԵՎՏՐԻ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ**

Խնդրում եմ տրամադրել լիցենզիա _____

_____ (գործունեության տեսակի անվանումը)

Լիցենզավորման պայմաններին ու պահանջներին ծանոթացել եմ և պարտավորվում եմ դրանք
պահպանել:

Կից ներկայացվում են՝

1. _____
2. _____
3. _____
- _____
- _____
- _____
- _____
- _____

Հայտատու _____

_____ (ստորագրությունը)

_____ (պաշտոնը, անունը, ազգանունը)

_____ 200 թ.

Կ. Տ.

Ձև 1

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**

ՀՀ պաշտպանության նախարար
պրն. _____

_____ հայտնում է, որ «_» «_____» «_____»-ից մինչև «_» «_____» «_____»-ը
_____ -ին մատակարարել (ներմուծել և/կամ/ արտահանել) է ռազմական նշանակության արտադրանք
(ցանկը կցվում է): Կից ներկայացվում են ռազմական նշանակության արտադրանքի ընդունման-հանձնման
արձանագրությունների պատճենները:

Լիցենզավորված անձի անվանումը (անունը) _____

ստորագրություն
Կ.Տ.

Ձև 2

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ

ՀՀ պաշտպանության նախարար
պրն. _____

_____ հայտնում է, որ «_» «_____» «_____»-ից մինչև «_» «_____» «_____»-ը
_____ -ին իրականացրել է ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրում (ցանկը
կցվում է): Կից ներկայացվում են ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրումը հաստատող
փաստաթղթերի պատճենները:

Լիցենզավորված անձի անվանումը (անունը) _____

ստորագրություն
Կ.Տ.

Ձև 3

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՌԵՎՏՐԻ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀՀ պաշտպանության նախարար
պրն. _____

_____ հայտնում է, որ «_» «_____» «_____»-ից մինչև «_» «_____» «_____»-ը

_____ -ին իրականացրել է ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեություն (ցանկը կցվում է): Կից ներկայացվում են ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեություն իրականացնելու պայմանագրի (պայմանագրերի) պատճենները:

Լիցենզավորված անձի անվանումը (անունը) _____

ստորագրություն
Կ.Տ.

2և 4

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ն Ե Ր Մ ՈՒ Ծ Վ Ա Ս Ը Ա Ջ Մ Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ա Կ ՈՒ Թ Յ Ա Ն Ա Ր Տ Ա Դ Դ Ա Ն Ք Ի Վ Ե Ր Ջ Ն Ա Կ Ա Ն Օ Գ Տ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն

ՀՀ պաշտպանության նախարար
պրն. _____

_____ հայտնում է, որ «__» «_____» «_____»-ին ներմուծված ռազմական նշանակության արտադրանքը (ցանկը կցվում է) օգտագործվել է հայտարարված վերջնական օգտագործման նպատակին համապատասխան: Կից ներկայացվում են ներմուծված ռազմական նշանակության արտադրանքի օգտագործումը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Լիցենզավորված անձի անվանումը (անունը) _____

ստորագրություն
Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Դ. Սարգսյան

Հավելված N 8
ՀՀ կառավարության 2009 թվականի
նոյեմբերի 12-ի N 1308-Ն որոշման

24



Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն

ԼԻՑԵՆԶԻԱ Սերիա ՌՆԱԱՆ _____

ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՆԵՐՄՈՒԾՈՒՄ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄ), (ՏԱՐԱՆՑԻԿ
ՓՈՒՍԴՐՈՒՄ), (ԱՌԵՎՏՐԻ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ)

կազմակերպության (ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ) անվանումը

կազմակերպության (ֆիզիկական անձի, անհատ ձեռնարկատիրոջ) գտնվելու վայրը

Գործողության ժամկետը _____

Տրման ամիսը, օրը, տարին

Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարար

ստորագրությունը

անունը, ազգանունը

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Դ. Սարգսյան